Հեռավար ուսուցման կառավարման համակարգի

# Օգտագործման ուղեցույց սովորողների համար

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՀՈՒԿՀ) ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ: ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ........ 3

2. ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ........ 8

# 1. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՀՈՒԿՀ) ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ: ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

*1.1. Առաջին էջ*

- **ՀՈՒԿՀ** գլխավոր էջը, ուր մուտք եք գործում ձեր զննիչից, սովարաբար պարունակում է տեղեկություններ ձեր հաստատության մասին և կարող է ամբողջովին փոփոխվել:
- Գլխավոր էջը հիմնական էջն է, որ երևում է Moodle կայքի այցելուներին գրանցվելուց առաջ: Այցելուն տեսնում է մուտք գործելու պատուհան, տեղեկատվական բլոկեր, դասընթացներ, որոնք արտացոլված են էջում:




- Հասանելի դասընթացներից որևէ մեկն ընտրելիս կպահանջվի մուտք գործել համակարգ: Առաջին անգամ մուտք գործելիս համակարգը առաջարկում է մուտք գործել Հյուրի կարգավիճակով կամ էլ Ստեղծել նոր հաշիվ: Հյուրի կարգավիճակը դա սահմանափակ իրավունքներ ունեցող հաշիվ է, որին հասանելի կլինեն միայն այն դասընթացները, որոնց համար «Հայուր»-ի մուտքը հատուկ թույլ է տրված: «Հյուր» հաշվի համար չի գրանցվում ոչ մի հաշվետվություն, հաշիվը գնահատական ստանալու կամ որևէ այլ գործողություն կատարելու հնարավորություն չունի, կարող է միայն դիտել թույլ տրված նյութերը: Նոր հաշիվ ստեղծելիս

օգտագործողը համակարգում գրանցվում է որպես լիազորված անձ, սակայն զրկված է յուրահատուկ արտոնություններից մինչ այն պահը, երբ ադմինիստրատորը բաշխում է դերերը՝ կախված անհատական դասընթացների հատուկ պահանջներից:




1.2. *Գրանցում համակարգում*

– Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է գրանցվել: Դա կարելի է անել կամ վերը ցուցադրված էջից, կամ գլխավոր էջից, սեղմելով «Նոր հաշիվ» կոճակը:




– Գրանցվելու համար պետք է լրացնել հետևյալ պարտադիր դաշտերը. մուտքանուն, գաղտնաբառ, որը պետք է համապատասխանի հատուկ պահանջներին, գործող էլ. փոստ (երկու անգամ), անուն, ազգանուն.


ՀՀ տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարության Հեռավար ուսուցման կառավարման համակարգ

Նոր հաշիվ

խտացնել ամբողջը

Ընտրեք Ձեր մուտքանունը և գաղտնաբառը

Մուտքանուն

Գաղտնաբառը պետք է ունենա առնվազն 8 գրանշան:, առնվազն 1 թվանշան:, առնվազն 1 փոքրատառ, առնվազն 1 մեծատառ, առնվազն 1 ոչ այբբենական նշան, ինչպիսին են *, -, կամ #

Գաղտնաբառ

Տրամադրել տեղեկություններ

Էլ. փոստ

Էլ.-փոստ (կրկնել)

Անուն

Ազգանուն

Քաղաք/Շրջան

Երկիր

Ընտրել երկիրը

Անվտանգության հարց

Ես ռոբոտ չեմ

reCAPTCHA

Ստեղծել իմ հաշիվը

Չեղարկել

Պարտադիր դաշտերը նշված են -ով:

– «Ստեղծել իմ հաշիվը» կոճակին սեղմելիս կհայտնվի հաջորդ պատուհանը:


Ձեր gayasa35@gmail.com հասցեով կուղարկվի հաղորդագրություն:

Այն պարունակում է պարզ հրահանգներ Ձեր գրանցումն ավարտելու վերաբերյալ:

Դժվարությունների դեպքում դիմեք կայքի կառավարչին:

Շարունակել

– Գրանցման ժամանակ նշված էլ. փոստի հասցեին կուղարկվի հետևյալ տեսքի նամակ.




– Սեղմելով վերը նշված նամակի հղմանը դուք կվերահղվեք ՀՈՒԿՀ և կկարողանաք շարունակել աշխատանքը:




– Կայքի քաղաքականությունը, օգտագործողի վավերացումը և առաջին էջի պարամետրերը որոշում են, թե ով կարող է այցելել տվյալ էջը: Եվ այցելելիս՝ ինչ են նրանք կարող տեսնել և ինչ կարող են անել:

– Համակարգում գրանցված ցանկացած անձ զրկված է յուրահատուկ արտոնություններից մինչ այն պահը, երբ ադմինիստրատորը բաշխում է դերերը՝ կախված անհատական դասընթացների հատուկ պահանջներից:

# 2. ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ

Գրանցված օգտագործողի համար բացվում է «Գրանցման տարբերակներ» էջը, որտեղ նա կարող է գրանցվել հասանելի դասընթացներին, ինչպես նաև անցնել Ղեկավարման վահանակ, Կայքի գլախվոր էջ, դիտել օրացույցն ու անձնական ֆայլերը: Սեղմելով աջ կողմի եռանկյունին հնարավորություն կստանաք դիտել և խմբագրել անձնական էջը, նախընտրությունները, դիտել գնահատականներն ու հաղորդագրությունները:




Ղեկավարման վահանակ էջի հիմնական պատուհանում կարող եք տեսնել ձեր վերջին մուտք գործած դասընթացները, ինչպես նաև դասընթացի նկարագիրը: Ձախ կողմում Մենյու բլոկն է իսկ աջ կողմում համակարգում աշխատելու օգտակար բլոկները: Այս էջը կարելի է խմբագրել՝ ավելացնել կամ հանել օգտակար բլոկեր:




Մենյուի բլոկի կետերը փոփոխվում են՝ կախված թե համակարգի որ էջում է այդ պահին գտնվում օգտագործողը: Օրինակ՝ ղեկավարման վահանակ էջում յուրաքանչյուր օգտագործող կարող է տեսնել իր

օրացույցը, անձնական ֆայլերը, դասընթացները, անցնել կայքի գլխավոր էջ, իսկ դասընթացի էջում կավելանան դասընթացին առնչվող լրացուցիչ կետեր:




